

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 642
ԳՈՅԳԱՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 241:— **Պրակները՝** 12, յուրաքանչյուրը 20-ական թերթից:— **Մեծությունը՝** 35.6×22,3×2.3 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն սպիտակ մաքուր թուղթ:— **Կազմը՝** սև և մոխրագույն ծաղկավոր թղթով ծածկված հաստ տվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում մի հատ բարակ հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** վեց սյունակի վրա: Թղթի երկու երեսների վրա տպված է հետևյալ վերնագիրը. «Տումար ամենատեսակ իրեղինաց ներքին գանձարանի Մ. Աթոռոյ»: Զախակողմյան թուղթն ունի հետևյալ հինգ սյունակները, որոնք վերնագրված են՝ «Ամիս ամսաթիւ, թիւ յօդ., Մուտք, հատ, կշիռ (Փ. Մսխ.)»: Իսկ աջակողմյան թուղթն ունի հետևյալ վեց սյունակները, որոնք վերնագրված են՝ «Ամիս ամսաթիւ, Ցօդ., Ելք, հատ, Ըստ մոից յօդ., ծանօթութիւն»:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 3ա, 4ա, 5ա, 6ա, 10ա, 12ա, 16ա, 17ա, 26ա, 27ա, 28ա, 31ա, 32ա, 33ա, 34ա, 35ա, 37ա, 39ա, 41·ա, 44բ—241բ:— **Տողերը՝** 27:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդ:— **Ժամանակը՝** 1925-ական թթ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** մատյանը ստացված է 1983 թ. ապրիլի 11-ին Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը հանդիսանում է Մայր Աթոռի ներքին գանձարանի գույքամատյանը: Ստորև տրվում է խմբավորված իրեղենների վերնագրերը:

Թ. 1բ.—I. Հայրապետական վեղարի խաչեր:
Թ. 2բ.—II. Տուփեր:
Թ. 6բ.—III. Պանագէ:
Թ. 9բ.—IV. Լանջա-խաչեր (Վարդապետական):
Թ. 16բ.—V. Մատանիներ:
Թ. 20բ.—VI Ժամացույցներ:
Թ. 23բ.—VII. Ասա:
Թ. 25բ.—VIII. Համրիչներ:
Թ. 26բ.—IX. Ծքանշաններ:
Թ. 29բ.—X. Ոսկեայ դրամներ:
Թ. 32բ.—XI. Արծաթ դրամներ:
Թ. 33բ—XII. Պղնձեայ դրամներ:
Թ. 34բ—XIII. Թէյի և սեղանի սերվիզ և զանազան իրեր:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 29ա.—Սոյն մատեանի № № 209—214-ի տակ արձանագրված իրերը 1926 թ. սեպտեմբերի 23-ին յատուկ կազմուած արձանագրութեամբ տարուած են Մայր Տաճարի աջակողմյան խորանի (հիւսիսային կողմ) եկեղեցական թանգարանը: Արձանագրութիւնը ստորագրել են Տ. Բագրատ, Տ. Մատթէոս և Տ. Գարեգին Արքեպիսկոպոսներն ու Տ. Գիւտ Եպիսկոպոսը:

1934 թ. Նոյեմբեր (ստր.) Խորէն Կաթ. Ամենայն Հայոց

Գէորգ Արքեպս.:

Թթ. 41բ—42ա.— Գերագոյն Հոգևոր Խորհուրդը 1934 թուի Նոյեմբերին (թթ. 42բ—43ա) Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ ստուգեց Մայր Աթոռի ներքին գանձարանի գույքը նախկին բոլոր փաստաթղթերով և կազմեց սոյն ցուցակը որը արձանագրուած է քառասունմէկ թերթի վերայ երեք հարիւր քսան ինն յօդուածով (329): (Կա չորս հոգու ստորագրություն):

Ներկայ էի՝ Խորէն Կաթուղիկոս Ամենայն Հայոց

Անդամք Գերագոյն Հոգ. Խորհրդի (թվական չկա):	Գէորգ Արքեպս. Արտակ Եպիսկոպոս Արսէն Եպս.

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1987 թվականի № № Թ—Ժ-ից:

Մատյանի աջակողմյան էջում նշված է ելք ու մուտք արված իրերը, տրվելու թվականը, իրն ստացողի անունն և հանձնողի ստորագրությունը: Այսպես օրինակի համար.

Ա. Խորեն Կաթողիկոսին հանձնված է Հայրապետական վեղարի խաչ (թ. 2ա), պանագե (թ. 9ա) և զմրուխտ մատանի (թ. 18ա):

Բ. Գևորգ Զ. Կաթողիկոսին հանձնված է Հայրապետական վեղարի խաչ (թ. 2ա), պանագե (թ. 8ա), վարդապետական լանջախաչ (թ. 14ա) և զմրուխտ մատանի (թ. 18ա):

Գ. Նորապսակ եպիսկոպոսներ՝ Մամբրե Գալֆայանին (թ. 7ա), Հովսեփ Կարապետյանին (թ. 9ա) և Սարգիս Շիրոյանին (թ. 9ա) հանձնված է պանագեներ:

Դ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին (թ. 13ա), Արսեն եպիսկոպոս Ղլըճյանին (թ. 14ա), և Սահակ ավ. քահ. Տեր-Հովհաննիսյանին (թ. 15ա) հանձնված է վարդապետական լանջախաչեր:

Ե. Նորապսակ եպիսկոպոսներ՝ Սուրեն Թորոսյանին (թ. 19ա), Ռուբեն Դրամբյանին (թ. 20ա), Արսեն Ղլըճյանին (թ. 21ա), Տաճատ Բասմաճյանին (թ. 21ա) և Վահան Կոստանյանին (թ. 21ա) հանձնված է մատանիներ:

Զ. Ժամացույցներ է տրված Ռուբեն եպս. Դրամբյանին, Գարեգին արքեպս. Հովսեփյանին և Սուրեն եպս. Թորոսյանին (թ. 23ա):

Զանազան այլ իրեր տրված են նաև բազմաթիվ այլ հոգևորականների և անձանց, հատուկ արձանագրությամբ:

№ 643
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 239:— **Պրակները՝** 12, յուրաքանչյուրը 20-ական թերթից:— **Մեծությունը՝** 34,5×22.5×2.5 սմ.— **Նյութը՝** մաքուր սպիտակ թուղթ:— **Կազմը՝** մոխրագույն ծաղկավոր թղթով ծածկված հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական դեղին հաստակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապույն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—1բ, 218ա—239բ:— **Տողերը՝** 30:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ (շատ հավանաբար Մայր Աթոռի միաբանության անդամ և վանքի դիվանապետ Թադեոս վարդապետը):— **Պատվիրատուն՝** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդ:— **Ժամանակը՝** 1924 թ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** մատյանը ստացված է 1983 թ. ապրիլի 11-ին Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը ներկայացնում է Ս. Էջմիածնի հայոց Գերագույն Հոգևոր նորակազմ Խորհրդի № № 1—131 նիստերի ատենագրության մատյանը: Այս ժողովները տեղի են ունեցել 1924 թ. հունվարի 2-ից մինչև դեկտեմբերի 29-ը:

Հետաքրքրության և պատմական նշանակության համար ստորև տրվում է առաջին նիստի արձանագրության առաջին մասը.

Թ. 2ա.—1924 թի Յունուարի 2-ին, առաւօտեան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետի Դիւանատանը կայացաւ Ս. Էջմիածնի Հայոց Գերագոյն Հոգևոր Խորհրդի առաջին ժողովը ներկայութեամբ Տ. Տ. Մեսրովբ, Բագրատ արքեպիսկոպոսների, Զաւէն և գիւտ եպիսկոպոսների:

Նախքան ժողովի բացումը ներկայ եղողների կողմից Տ. Բագրատ արքեպիսկոպոսը ներկայացաւ Վեհափառ Հայրապետին ժողովի հրաւիրելու: Վերադառնալով Տ. Բագրատ արքեպիսկոպոսն յայտնեց որ Վեհափառ Հայրապետն իւր հիւանդութեան պատճառով հնարաւորութիւն չունի ժողովի գալու և յայտնեց որ ժողովին կարող է նախագահել աւագագոյնը կամ ընտրութեամբ:

Տ. Մեսրովբ աքրեպիսկոպոս ընտրուեց ժողովի նախագահող:

Կարդացուեց Ամենայն Հայոց Հայրապետի տարւոյս 1-ն Յունուարի թ. 1 շրջաբերական կոնդակը, որով (Թ. 2բ) յայտնւում է ամբողջ հայութեան որ հաստատուել է Ս. Էջմիածնում ժամանակաւոր Գերագոյն Հոգևոր Խորհուրդ մինչև համազգային ժողովի գումարումը, իւր նախագահութեամբ և Մ. Աթոռի վեց արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների անդամակցութեամբ, որք են Տ. Տ. Մեսրովբ, Խորէն, Բագրատ եպիսկոպոսներ, Գարեգին, Զաւէն և Գիւտ եպիսկոպոսները:

Նոյն կոնդակով տնօրինւում է.

Ա. Որ Գերագոյն Խորհրդի անդամ են համարւում թեմական բոլոր առաջնորդները, որոնք անհրաժեշտութեան դէպքում Գերագոյն Հոգևոր Խորհրդի հրաւիրանօք գալու են Մ. Աթոռ խորհրդին մասնակցելու:

Բ. Որ Վեհափառ Հայրապետի բացակայութեան դէպքում խորհրդին նախագահելու է Տ. Տեղակալը:

Գ. Որ եկեղեցական բոլոր խնդիրները (և գործերը, թէ վարչական, թէ կրօնական և թէ տնտեսական՝ Հայաստանի և թէ արտասահմանի թեմերի ենթարկելու են Գերագոյն Հոգևոր Խորհրդի քննութեան ու վախճանական վճռին:

Դ. Որ Գերագոյն Հոգևոր Խորհուրդը փութացնելու է համազգային ժողովի (թ. 3ա) գումարումը:

և Ե. Որ Գերագոյն Խորհուրդը վարելու է Ս. Էջմիածնի նախկին Սինոդի և Հայրապետական դիւանի բոլոր գործառնութիւնները:

Կարդացուեց Ամենայն Հայոց Հայրապետի տարւոյս 1 Յունուարի թ. 2 կոնդակը, յանուն Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամներ Տ. Տ. Մեսրովբ, Խորէն, Բագրատ արքեպիսկոպոսների, Գարեգին, Զաւէն և Գիւտ եպիսկոպոսների, որով բացի թ. 1

կոնդակով արուած տնօրինութիւններից, կարգադրում է որ կարգում է նոցա Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամներ և յանձնարարում.

Ա. Կազմակերպեն Գերագոյն Հոգևոր Խորհրդի Դիւան.

Բ. Կազմեն հրաւանգ Գերագոյն Հ. Խորհրդի գործառնութեան և գործավարութեան համար.

Գ. Միացնեն նախկին Սինոդի և Հայրապետական Դիւանի բոլոր գործերը ենթարկելով Գերագոյն Հ. Խորհրդի հսկողութեան տեսչութեան:

և Դ. Վերցնեն Մ. Աթոռի գանձարանը Գերագոյն Հ. Խորհրդի հսկողութեան ու տեսչութեան ներքոյ:

Համաձայն վերոհիշյալ կոնդակների Գերագոյն Հո(թ.Ցբ)գևոր Խորհրդում որոշեցին.

(Ա.—ԺԱ (11) կետերով Դիվանապետի, գանձապահի և քարտուղար-հաշվապահի նշանակում, ունենալ Գ. Հ. Խորհրդի հատուկ կնիք և նամակի թուղթ, երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն), ձեռք բերել նախկին Դիվանի ու Սինոդի մատյաններն և փակել դրանք և այլն):

Թ. 4ա.— Սոյն որոշումները նախագահողը (այսինքն Մեսրոպ արքեպ.—Ն. Մ.) զեկուցեց Վեհափառ Հայրապետին:

(Կան հետևյալ ստորագրությունները)

Նախագահող Գերագոյն Խորհրդի՝

Վշտալի Գէորգ Ե. Կթղկս. ամ. Հայոց

Անդամներ
- Մեսրոպ Արքեպս.
- Բագրատ Արքեպիսկոպոս
- Զաւէն Եպիսկոպոս
- Գիւտ Եպիսկոպոս

Գ. Հ. Խորհրդի անդամներ Մեսրոպ արք. Տեր-Մովսեսյանը, Բագրատ արք. Վարդազարյանը, Զավեն եպս. Բաբայանը և Գյուտ Եպս.ը մասնակցել են Գ. Հ. Խորհրդի գրեթե բոլոր նիստերին, բացի այն օրերին, որ խամբորդել են կամ հիվանդացել:

1924 թ. հունիսի 27-ից (նիստ № 63) սկսած կանոնավոր կերպով մասնակցել է նաև Գարեգին եպս. Հովսեփյանը, բացի մի քանի անգամ, այն էլ ճամբորդության պատճառով:

Երևանի առաջնորդ Խորէն արք. Մուրադբեկյանը մասնակցել է քսան նիստերի (№ 20—21, 80—82, 88—89, 117—123, 126—131):

Բաքվի և Թուրքեստանի թեմի առաջնորդ Մատթեոս եպս.ը մասնակցել է երկու նիստերի (№ 27 և 34):

Ռումինահայոց թեմի առաջնորդ Հուսիկ եպս. Զոհրապյանը մասնակցել է երեք նիստերի (№ 63, 67 և 68):

Վրաստանի թեմի առաջնորդ Գեորգ եպս. Զորեքչյանը մասնակցել է չորս նիստերի (№ 78—81):

Շիրակի թեմի առաջնորդ Իսահակ վարդապետը մասնակցել է չորս նիստերի (№ 124—127):

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները յուրաքանչյուր նիստի ատենագրությունը հաստատելուց և ստորագրելուց հետո մատյանը ներկայացրել են Տ. Գեորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ իր կարգին հաստատել ու ստորագրել է: Միայն մի քանի անգամ, մի շարք որոշումների հետ համաձայն չի եղել և գրավոր նշել իր անհամաձայնությունը:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրայի մեծ պիտակի վրա գրված է հետևյալը)

№ 1

Արձանագրութեան Մատեան
Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր
Խորհրդի 1924 թի:
Ս. Էջմիածին
(Սկզբի պահպանակի վրա գրված է)
№ 1:

Թ. 78ա.— Երրորդ որոշումն թողնել ցսա անձին տնօրէնութ ու պատրիարքների և եպսկական դասու խորհրդակցութ կանոնական-կոնդակաւ տնօրինել զարժանն ժամանակին:

Վշտալի Գէորգ Ե. Կթղկս. ամ. Հայոց:

Թ. 126բ.— Երրորդ աստիճանի խնամէուի ըստ կանոնական կոնդակի թոյլատրելի չէ (նույն ստորագրությունը):

Թ. 157ա.— Բենիկ վարդապետի նկատմամբ եղած այս որոշման, որով նա զրկւում է հոգևոր կոչումից, համաձայն եմ: 26 սեպտ. 1924 թ.:

Առաջնորդ Գանձակի՝ Լևոն եպս.:

Թ. 170բ.— Երկրորդ կէտին անհամաձայն եմ: Կսպասեմ Լոնտոնի խնամակալութ միջնորդութ:

Վշտ. Գ. Կ. ամ Հայոց:

Թ. 182ա.— Վշտալի Գ. Կ. ամ Հայոց:

Ծան. Ե. կէտին: Գանձապահը 300 տոլարն իմ ներկայութ արդէն ստացել է ամսոյս 20-ին ապա ուրեմն պէտք է դնել ներքին գնձրն. տես մտից Հոկտ. 20 № 836:

№ 644

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 318:— **Պրակները՝** 16, յուրաքանչյուրը 20-ական թերթ:— **Մեծությունը՝** 34.5×22.3×2.7 սմ.:— **Նյութը՝** սպիտակ մաքուր թուղթ:— **Կազմը՝** հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ դեղնավուն հաստ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 217բ—218բ և 318բ:— **Տողերը՝** 30:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ, սակայն շատ հավանաբար Մայր Աթոռի դիվանապետ Թադեոս Ծայր. վարդապետն է:— **Պատվիրատուն՝** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հովևոր Խորհուրդ:— **Ժամանակը՝** 1925—1926 թթ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** մատյանը ստացված է 1983 թ. ապրիլի 11-ին Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը ներկայացնում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի № № 1—120 նիստերի արձանագրության մատյանը: Այս ժողովները տեղի են ունեցել 1925 թ. հունվարի 9-ից մինչև դեկտեմբերի 30 (թթ. 1ա—216ա): Մատյանում կա նաև հաջորդ ժողովների արձանագրությունն ևս, № № 1—56 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1926 թ. հունվարի 4-ից մինչև մայիսի 28 (թթ. 219ա—318ա):

Գերագույն Հոգևոր Խորհուրդը 1926 թ. հունվարի 28-ից մինչև փետրվարի 16 գումարում է քսան լիագումար նիստեր (թթ. 232ա—283բ), որոնց բոլորին մասնակցել են Գ. Հ. Խորհրդի վերոհիշյալ անդամներից բացի նաև ներքին բոլոր թեմերի առաջնորդները՝ այսպես. Վրաստանց թեմի առաջնորդ՝ Գեորգ Արքեպիսկոպոսը, Բաքվի և Թուրքեստանի՝ Մատթեոս Արքեպիսկոպոսը, Գանձակի՝ Լևոն Եպիսկոպոսը, Սյունյաց՝ Արտակ Եպիսկոպոսը, Շիրակի՝ Իսահակ Ծ. Վարդապետը, Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի կառավարիչ՝ Գրիգորիս Վարդապետը, Այրարատյան թեմի առաջնորդական փոխանորդ՝ Հակոբ ավագ քահանա Խաչվանքյանը և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական փոխանորդ՝ Պողոս ավագ քահանա Բեդելյանցը:

Այսպիսի լիագումար և հաջորդական նիստեր (հաճախ մեկ օրում երկու նիստ նույնիսկ) գումարվել են առաջին անգամ և քննվել են Հայ Եկեղեցու և Մայր Աթոռին հետ առնչվող բազմաթիվ և բազմազան հարցեր:

Թ. 271ա.— 1926 թ. փետրվարի 8-ի № 23 նիստում Գ. Հ. Խորհուրդը քննարկել է «Ազգային Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրությունը», բաղկացած 3 բաժիններից և 25 կետերից (թթ. 271բ—273ա):

Թ. 274բ.—1926 թ. Փետրվարի 9-ի № 24 նիստում Գ. Հ. Խորհուրդը քննարկել է «Հայաստանյայց Առաքելական ազգային Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագիծը», բաղկացած 12 բաժիններից և 80 կետերից (թթ. 274բ—277ա):

Թ. 274բ.—Հիմնական կանոններ:

Թ. 275ա.—Հայաստանեայց Առաքելական ազգային Ս. Եկեղեցու վարչակազմը:

Վարչական ժողովական մարմիններ:

Ազգային եկեղեց. ժողովի իրաւասութիւնը:

Թ. 275բ.—Ամենայն Հայոց Կաթուղիկոս:

Թ. 276ա.—Գերագոյն Հոգևոր Խորհուրդ:

Թեմական պատգամաւորական ժողով:

Թ. 276բ.—Առաջնորդ:

Թեմական Հոգ. Խորհուրդ:

Բարեկարգչական շրջան(ային) ներկայաց(ուցչական) ժողով:

Թ. 277ա.—Շրջանային Հոգ. Խորհուրդ.

Ծխական Ժողով և Ծխական Խորհուրդ:

Թ. 278ա.—1926 թ. փետրվարի 9-ի № 25 նիստում Գ. Հ. Խորհուրդը քննարկել է «Խորհրդային երկրների սահմաններում գտնված բեգիստրացիայի համար մշակված կանոնադրությունը», բաղկացած 8 բաժիններից և 18 կետերից (թթ. 278ա—279ա): Գրված է ռուսերենով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—1925 թի
Արձանագրութիւններ:
Թ. 218ա.—1926 թ.:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա)

№ 2
Սուրբ Էջմիածնի
Գերագոյն Հոգևոր Խորհրդի
Արձանագրութեան
1925 թ.
1926 ց 28/III—թ. 56:

(Սկզբի պահպանակի վրա)

№ 2

Թ. 192բ.—5 կէտ՝ առաջին կարգի շքանշան չունինք, ուստի տալ Բ. աստիճանի և մտի նորը շինել տալ (Գեորգ Ե. Կաթողիկոսի ձեռագիրն է):

Թ. 216ա.—Սխալմամբ այստեղ է գրել ... 1926 թի № 2-ը:

Թ. 220ա.—Ցանձնել Խորէն Սրբազանին, որ նա է ձեռնադրել աբեղայ (Մեսրոպ Արքեպիսկոպոսի ձեռագիրն է):

Թ. 232ա.—№ 9-ից մինչև № 28 արձանագրութիւններն վաւերացնում ենք: 10 Մարտի 1926, Ս. Էջմ., Գ. Կ. ամ. Հայոց:

Թ. 315բ.—Ցօդ(ուած) 3. Անտեղի խնդիր, ուստի ուղղակի տնօրինել Վ(ռաստանի) խորհրդի կողմից, առանց կոնդակ գրելու:

Վշ(տալի) Գ(էորգ) Կ(աթուղիկոս) ամ(ենայն) Հայոց:

№ 645

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 191:— **Պրակները՝** 12, յուրաքանչյուրը 16-ական թերթից (վերջին պրակը մեկ թերթ պակաս է):— **Մեծությունը՝** 35.2×22.4×1.9 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն մաքուր թուղթ:— **Կազմը՝** հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական վարդագույն ծաղկավոր թուղթ: —**Վիճակը՝** բավարար, կազմը մի քիչ պոկված է: —**Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—1բ, 80բ—81բ:— **Տողերը՝** 33:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն** չունի:— **Գրիչը** Մայր Աթոռի դիվանապետ Ռուբեն Ծայր. Վարդապետ Մանասյան:— **Պատվիրատուն՝** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերա-

գույն Հոգևոր Խորհուրդ։— **Ժամանակը՝** 1926—27 թթ.։— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք։— **Ծանոթագրություն՝** մատյանն ստացված է 1983 թ. ապրիլի 11-ին Մայր Աթոռի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը ներկայացնում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի № № 57—112 նիստերի ատենագրության մատյանը։ Այս ժողովները տեղի են ունեցել 1926 թ. հունիսի 2-ից մինչև դեկտեմբերի 30 (թթ. 2ա—80ա)։ Մատյանում կա նաև հաջորդ ժողովների արձանագրությունն ևս, № № 1—116 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1927 թ. հունվարի 3-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 82ա—191բ)։

Գերագույն Հոգևոր Խորհրդի վերոհիշյալ նիստերին մասնակցել են հետևյալ անդամները՝ Խորեն, Բագրատ, Մատթեոս, Գարեգին և Գեորգ արքեպիսկոպոսները, ինչպես նաև Գյուտ եպիսկոպոսը։

Գյուտ եպիսկոպոսը մասնակցել է սկզբի ժողովներին, հետագայում հիվանդացել ու բացակայել է։ Ապա նա վախճանվել է 1927 թ. դեկտեմբերի 1-ին (տես թ. 185ա)։

Վերջին ժողովներին մասնակցել է Գեորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը։ Բացակայություններ ունեն Մատթեոս և Գարեգին արքեպիսկոպոսները, զանազան պատճառներով։ Մի քանի ժողովների մասնակցել են նաև Արցախի թեմի առաջնորդ Վրթանես ծայր. վարդապետն և Սյունյաց թեմի առաջնորդ Սարգիս ծայր. վարդապետը։

Այս բոլոր ատենագրությունները կարդացել և հաստատել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե Սուրենյանցը։

№ № 67—69 (22 հուլիսի 1927) ատենագրությունները (թթ. 147ա—150ա) գրված են Գ. Հ. Խորհրդի անդամ Գեորգ արքեպիսկոպոսի ձեռամբ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 81ա.—1927 թիւ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է № 3։

Թ. 1ա.—№ 3։

Թ. 17բ.—5(րդ) կէտի վերջին պարբերու(թիւն)ը անվտ (?) այժմ մնաց անկատար մեր կողմից։ Գ(եորգ) Կ.ամ.Հայոց։

Թ. 23բ.— Կարմիր թանաքով ուղղումը կատարուել է խորհրդում համաձայն նոր ստացված գրության։ Անդամ Գեր. Խորհրդի՝ Խորէն Արքեպիս.։

Թ. 26ա.—Կցանկայի իմանալ գնձրնում. քանի՝ ռուբլի կայ։ Վշ. Գ. Կ. ամ. Հայոց։

Թ. 74ա.—Ռուբէն ծ. վ. գնալու է Բաղտատ, ուստի ես չեմ վաւերացնում։ Գ. Կ.։

Ստուգելով որ պաշտօնը կարճ ժամանակով է ուստի վաւերացնում եմ։ Գ. Կ. (Գեորգ Կաթողիկոս—Ն. Մ.)։

Թ. 114ա.—(Տեքստը՝ «Եգիպտոսի Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոսը միջնորդում է Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետի առաջ շնորհելու Աղէքսանդրիոյ (թ. 114բ) առաջնորդական փոխանորդ Մամբրէ ծ. վարդապետ Սիրունեանին վարդապետական ականակուռ լանջախաչ։ Որոշուեց Վեհափառ Հայրապետի կանխահան համաձայնութեամբ՝ տալ»)։

(Վերջին տողը հետագայում փոխված է սապես Գեորգ արքեպս. Չորեքչյանի ձեռամբ)

«Որոշուեց յարգելի համարել միջնորդութիւնը և խնդրել Վեհափառ Հայրապետի տնօրէնութիւնը»։

(Ներքևում նույն ձեռքով գրված է)

«Սոյն երեսի երրորդ տողի յաւելումներին և չորրորդ տողի ուղղումներին հաւատալ»։ Գէորգ Արքեպս.։

Թ. 116ա.—(Տեքստում երկու բառ է ավելացված) ...«հաշիւների տնտեսական...»։

(Ներքևում գրված է հետևյալը)

«3-րդ յօդուածի առաջին տողի ուղղումին հաւատալ»։ Գէորգ Արքեպս.։

Թ. 120ա.—(Նախորդ էջում երկու փոքրիկ ուղղումներ է կատարված) Գրված է հետևյալը.

«Արձանագրութեան 16 և 17-րդ տողերի ջնջումներին և ուղղումներին հաւատալ՝ Գէորգ Արքեպս.»։

Թ. 121բ.—Արձանագրութ(եան) 3(րդ) յօդուածի մի անդամի ձայնով որոշումին համաձայն չեմ։ Վշտ. Գ(էորգ) Կ. ամ. Հայոց։

№ 646

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 141։— **Պրակները՝** 9, յուրաքանչյուրը 16-ական թերթից, բացի Ա և Ե պրակները, որոնք 14 թերթից են բաղկացած։— **Մեծությունը՝** 35.3×23.4×1.5 սմ.։— **Նյութը՝** բարակ թուղթ։— **Կազմը՝** հաստ ստվարաթուղթ։— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական սպիտակ թուղթ։— **Վիճակը՝** անբավարար, քայքայված։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 31ա—31բ։— **Տողերը՝** 33։— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է։— **Գիրը՝** շեղագիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** Գեորգ արքեպիսկոպոս Չորեքչյան, բացի իր բացակայության մի քանի նիստերի արձանագրությունը (1928 թ. № № 5—6, 15—51, 60, 65, 67—76, 78—79), որոնք գրված են այլ ձեռագրերով։— **Պատվիրատուն՝** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդ։— **Ժամանակը՝** 1927—29 թթ.։— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք։— **Ծանոթագրություն՝** մատյանն ստացված է 1983 թ. ապրիլի 11-ին Մայր Աթոռի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը ներկայացնում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի № № 83—116 նիստերի ատենագրության մատյանը: Այս ժողովները տեղի են ունեցել 1927 թ. սեպտեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 1ա—30բ): Մատյանում կա նաև հաջորդ ժողովների արձանագրությունն ևս, № № 1—81 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1928 թ. հունվարի 9-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 32ա—113ա), ինչպես նաև 1929 թ. հունվարի 4-ից մինչև մայիսի 17 տեղի ունեցած № № 1—27 նիստերի արձանագրությունը (թթ. 113բ—141ա):

Գերագույն Հոգևոր Խորհրդի վերոհիշյալ նիստերին մասնակցել են մեծ մասամբ Խորեն, Բագրատ, Գարեգին և Գեորգ արքեպիսկոպոսները, իսկ երբեմն էլ Մատթեոս արքեպիսկոպոսը, Շիրակի թեմի առաջնորդ Արտակ եպիսկոպոսը, Գյուտ եպիսկոպոսը (վախճանվել է 1 դեկտ. 1927 թ.), Սյունյաց թեմի առաջնորդ Սարգիս ծ. վարդապետը (ապա եպիսկոպոս), Իսահակ ծ. վարդապետը և Հյուսիսային Կովկասի թեմի կառավարիչ Գրիգորիս վարդապետը:

Այս մատյանում արձանագրված ոչ մի նիստի ատենագրության ներքև չկա Գեորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի ստորագրությունը, մինչդեռ նախորդ երեք մատյաններում (№ № 643—645) կար:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա գրված է)

Գերագույն Հոգևոր Խորհրդի արձանագրութեանց սնագրի № 4 մատեան: 1927 թ. Ս. Էջմիածին:

Թ. 31ա.—1928 թ.:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա գրված է)

№ 4:

Թ. 64ա.—Ըստ այս որոշման ուղարկված են հեռագիրները:

(Մատյանում կա մի փոքրիկ թուղթ, 17×11 սմ. չափերով, որի վրա գրված է հետևյալը)

Արձանագրությունների համարներն եղել են՝

1924	թվին	131 արձանագր.
1925	. . . . .	120 № 1/251
1926	. . . . .	112 № 1/363
1927	. . . . .	116 № 1/479
1928	. . . . .	81 № 1/560

Գմր. 560 արձ.:

№ 647

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 144:— **Պրակները՝** 12, յուրաքանչյուրը 12-ական թերթից:— **Մեծությունը՝** 35.4×22.3×1.5 սմ.:— **Նյութը՝** սպիտակ մաքուր թուղթ:— **Կազմը՝** հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ դեղին թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 79ա—80բ, 138ա—138բ, 142բ—144բ:— **Տողերը՝** 33:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Կարապետ Քոչարյան:— **Պատվիրատուն՝** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդ:— **Ժամանակը՝** 1930—32 թթ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** մատյանը ստացված է 1983 թ. ապրիլի 11-ին Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը ներկայացնում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի № № 71/710—103/742 նիստերի արձանագրության մատյանը: Այս ժողովները տեղի են ունեցել 1930 թ. սեպտեմբերի 8-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 1ա—31բ): Մատյանում կա նաև հաջորդ ժողովների արձանագրությունն ևս, № № 1/743—51/793 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1931 թ. հունվարի 12-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 32ա—78բ), ինչպես նաև 1932 թ. հունվարի 5-ից մինչև նոյեմբերի 3 տեղի ունեցած № № Ա—ԿԲ (1—62) նիստերի արձանագրությունը (թթ. 81ա—142ա):

Գերագույն Հոգևոր Խորհրդի վերոհիշյալ նիստերին մասնակցել են Խորեն (Հայրապետական տեղակալ և Նախագահող Գերագույն Հոգևոր Խորհրդի), Մեսրոպ (Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ), Բագրատ (Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդ), Մատթեոս, Գարեգին և Գեորգ արքեպիսկոպոսները, ինչպես նաև զանազան թեմերի առաջնորդներ՝ Արտակ (Վրաստանի), Իսահակ (Շիրակի) և Վրթանես (Ղարաբաղի) եպիսկոպոսները:

Գեորգ Ե. Սուրենյանց Կաթողիկոսի վախճանումից հետո, այս բոլոր ժողովներին նախագահել է Հայրապետական տեղակալ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը:

1930 թ. ժողովների մեծ մասում, թեմական, եկեղեցական, տնտեսական և առօրյա այլ հարցերից բացի, Գերագույն Հոգևոր Խորհուրդը զբաղվել է նաև ներքին և արտաքին թեմերի պատգամավորների, ինչպես նաև նոր կաթողիկոսի ընտրության ու այլ հարակից հարցերով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է)

№ 5

Գերագույն Հոգևոր Խորհրդի

Արձանագրութիւնների մատեան

19—IX—1930 թ. Ս. Էջմիածին:

Թ. 81ա.—1932 թ.:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է)

1930:

(Պահպանակի վրա գրված է)

1930:

№ 5:

№ 648

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 344:— **Պրակները՝** 19, յուրաքանչյուրը 18-ական թերթից:— **Մեծությունը՝** 35.3×22.5×3.7 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն սպիտակ թուղթ:— **Կազմը՝** հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական թուղթ, որի վրա զանազան նկարներ կան՝ խարիսխ, երկաթուղի, մեղու, մուրճ-մանգաղ, օձեր, զանազան գործիքներ, ինչպես նաև թղթի գործարանի մեծ նկար: **Թղթի** վրա գրված է.— Государственный трест „Графическое дело", ներքևում էլ Государственная фабрика „Светоч", Ф.З , Л.Н.Г.—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 39բ, 41բ—42բ, 44բ—45ա, 165ա—166բ, 216ա—216բ, 220բ—221բ, 316ա—317բ:— **Տողերը՝** 37:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչներ՝** Մատթեոս և Գեորգ արքեպիսկոպոսներ, Արտակ եպիսկոպոս և նաև ուրիշ անձինք:— **Պատվիրատուն՝** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդ:— **Ժամանակը՝** 1929—34 թթ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** մատյանը ստացված է 1933 թ. ապրիլի 11-ին Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը ներկայացնում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի № № 28/588—79/639 նիստերի ատենագրության մատյանը: Այս ժողովները տեղի են ունեցել 1929 թ. մայիսի 20-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 2ա—41ա): Մատյանում կա նաև հաջորդ ժողովների արձանագրությունն ևս, № № 1/640—103/742 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1930 թ. հունվարի 8-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 43ա—123ա), № № 1/743—51/793 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1931 թ. հունվարի 12-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 123բ—164բ), № № Ա—ԿԲ (1—62) նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1932 թ. հունվարի 5-ից մինչև նոյեմբերի 3 (թթ. 167ա—220ա), № № Ա—ԺԷ (1—17) նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1932 թ. նոյեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 222ա—237բ), № № Ա—ՁԱ (1—81) նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1933 թ. հունվարի 2-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 238ա—315բ), և վերջապես № № 1—27 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1934 թ. հունվարի 9-ից մինչև հունիսի 22 (թթ. 318ա—344բ):

Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին մասնակցել են որպես անդամ Խորեն, Բագրատ, Մատթեոս, Գարեգին, Գեորգ և Գյուտ արքեպիսկոպոսները, Արտակ, Վրթանես և Արսեն եպիսկոպոսները, ինչպես նաև 1934 թ. մայիսի 24-ից սկսած Թիֆլիզից հրավիրված Ստեփան Մալխասյանն և Երևանի թեմից հրավիրված Կոստանդին Գյուլնազարյանը:

Թ. 59ա.— 1930 թ. մայիսի 8-ին վախճանվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենյանցը: 1923 թ. մարտի 4-ին գրած № 31 կոնդակով նա նշանակվել է Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանին Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ:

Թ. 63ա.— Գերագույն Հոգևոր Խորհրդի 1930 թ. մայիսի 23-ի № 30/669 արձանագրության ներքև Խորեն արքեպիսկոպոսն ստորագրում է որպես Հայրապետական տեղակալ և Նախագահող Գերագույն Հոգևոր Խորհրդի:

1932 թ. նոյեմբեր ամսին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայացած Ազգային Եկեղեցական ընդհանուր ժողովը Խորեն արքեպիսկոպոսին ընտրում է Ամենայն Հայոց Կաթողիկոս: Օծումից հետո Վեհափառ Հայրապետն այլևս չի մասնակցում Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին, սկսած 1932 թ. նոյեմբերի 18-ից (թ. 222ա):

Ազգային Եկեղեցական ժողովն ընտրել է նորակազմ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, որոնք հետևյալներն են՝ Գարեգին և Գեորգ արքեպիսկոպոսներ, Ղարաբաղի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս և Գանձակի թեմի առաջնորդ Սարգիս եպիսկոպոս:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—Գերագույն Հոգևոր Խորհրդի Արձանագրութեանց մատեան
№ 5
1929 թ. Մայիս
Ս. Էջմիածին:

Թ. 42ա.—1930 թ.:

Թ. 123բ.—1931 թ.:

Թ. 167ա.—1932 թ.:

Թ. 238ա.—1933 թ.:

Թ. 318ա.—1934 թ.:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի կողքին գրված է)

№ 24:

Թ. 7ա.—Կատարել. Գ(եորգ) Կթղ.:

(Այսպես գրել է Վեհափառ Հայրապետը 1929 թ. հունիսի 12-ի նիստի արձանագրության վերևի մասում: Այս նիստում Գերագույն Հոգևոր Խորհուրդն որոշել է՝ Ա. Հայ Եկեղեցու բոլոր թեմական առաջնորդներն ու նրանց միջոցով հավատացյալ հայ ժողովուրդը «լոյալ և բարեացակամ մնան դէպի Խոր-

հրդային իշխանությունը. չթոյլատրել հակայեղափոխական ելույթներ, եկեղեցական-կրոնական հանգամանքներն ու հաստատությունները չօգտագործել հակախորհրդային պրոպագանդի համար, որպիսի ընթացքը դատապարտելի և պատասխանատուության ենթակայ համարուել է և կը համարուի այսուհետև» և Բ. Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանն ետ է կանչվում Մայր Աթոռ այլ պաշտոնի համար (թ. 7բ):

Թ. 227բ.—(Արտակ եպիսկոպոս իր ստորագրության կողքը գրել է) ձեռնպահ է երկուսի ձեռնադրութ(եան) վերաբերմամբ (խոսքը վերաբերվում է Մայր Աթոռի միաբաններ Թադև Ծ. վրդ.ի և Դանիել Ծ. վրդ.ի եպիսկոպոս ձեռնադրության մասին):

Թ. 250ա.—(Արտակ եպիսկոպոս իր ստորագրության կողքը գրել է) Պակասած ալիւրի մասին ունեմ առանձին կարծիք: Պատասխանատու վնասար(ար)ները պիտի տուժեն ալիւրի որոշ քանակով:

Թ. 334բ.—Ծանօթ. Ուղղած է «երկուսը» և գրուած է «երեք»: Դիւանապետ և անդամ Գերագոյն Հոգևոր Խորհրդի՝ Արտակ Եպս.:

(Մատյանի վերջում կան անկարևոր ձեռագիր հինգ թղթեր):

№ 649
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 223:— **Պրակները՝** 11, յուրաքանչյուրը 20-ական թերթից:— **Մեծությունը՝** 29.5×20.3×2.4 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն հասարակ թուղթ:— **Կազմը՝** բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ դեղին թուղթ:— **Վիճակը՝** բավարար, սակայն կազմը պոկված է:— **Գրությունը՝** միապուն:— **Դատարկ թերթերը՝** 3բ—4բ, 117ա, 209ա—223բ:— **Տողերը՝** 29:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Արտակ եպիսկոպոս և այլ անձինք:— **Պատվիրատուն՝** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդ:— **Ժամանակը՝** 1934—37 թթ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** մատյանը ստացված է 1983 թ. ապրիլի 11-ին Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը ներկայացնում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի № № 30—66 նիստերի ատենագրության մատյանը: Այս ժողովները տեղի են ունեցել 1934 թ. հուլիսի 10-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 2ա—40բ): Մատյանում կա նաև հաջորդ ժողովների արձանագրությունն ևս, № № 1—55 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1935 թ. հունվարի 21-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 41ա—108ա), № № 1—62 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1936 թ. հունվարի 22-ից մինչև դեկտեմբերի 30 (թթ. 108բ—180բ) և վերջապես № № 1—24 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1937 թ. հունվարի 12-ից մինչև հունիսի 29 (թթ. 181ա—208բ):

Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին մասնակցել են միայն երեք անդամներ՝ Գեորգ արքեպիսկոպոս, Արսեն և Արտակ եպիսկոպոսներ: Գարեգին արքեպիսկոպոս մասնակցել է միայն սկզբի ժողովներին (1934 թ. № № 30—47), որից հետո նա մեկնել է արտասահման (1934 թ. հոկտեմբերին):

Թ. 19ա.— ... Տ. Գարեգին Արքեպս.ը կարգած է «Նուիրակ և Հայրապետական ներկայացուցիչ» արտաքոյ Խորհրդային Միութեան բոլոր եկեղեցական գործերը կարգաւորելու, յատկապէս Եւրոպիոյ թեմը կազմակերպելու և Ամերիկայի թեմը կարգավորելու և խաղաղացնելու, այլև ափիոքի հայութեան՝ Մայր Տաճարի և Մայր Հայրենիքի վերաշինութեան գործին աջակից լինելու հրաւէր կարդալու:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների բացակայության հետևանքով շատ անգամ նիստերը գումարվել են երկու հոգով՝ Գեորգ և Արտակ Սրբազանների ներկայությամբ: Մի անգամ էլ (թ. 147բ, նիստ № 39, 31 հուլիսի 1936 թ.) ներկա է եղել Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ Սարգիս Եպիսկոպոս:

Մատյանում գտնվող սկզբի արձանագրությունների ներքև ստորագրել է միայն Արտակ Եպիսկոպոսը (թթ. 2ա—125բ, 1934—36 թ. մարտ ամիսը): Այսպես բոլորովին ստորագրություն չկա մինչև 1936 թ. դեկտեմբերի 22 (բացառությամբ մի քանիսը, որտեղ Արտակ Սրբազանն է ստորագրել):

1936 թ. դեկտեմբերի 30-ից մինչև 1937 թ. հունիսի 20-ի Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրության ներքև ստորագրել է միայն նախագահը՝ Խորեն Կաթողիկոս Ամենայն Հայոցը:

Թ. 119բ.—1936 թ. մարտի 5-ի № 12 արձանագրությունը չի գրված:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է)

№ 7

Մատեան

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորդ.ի

Արձանագրութեանց.

10ն Յուլիսի 1934 թ., 1935, 1936, 1937:

Թ. 1ա.—(Նույնը կրկնված է այստեղ, միայն ավելի գրված է հետևյալը).

Ս. Էջմիածին:

Թ. 41ա.—1935:

Թ. 108բ.—1936 թ.:

Թ. 181ա.—1937:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 114ա.—Գտնելով յետին միտք որոշման մէջ՝ ձեռնպահ եմ:

Արտակ Եպիսկոպոս:

Թ. 115բ.—Ձեռնպահ եմ: Արտակ Եպիսկոպոս:

№ 650
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 98:— **Պրակները՝** 4:— **Մեծությունը՝** 29.4×21×1.3 սմ.:— **Նյութը՝** դեղնած շատ հասարակ թուղթ:— **Կազմը՝** բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական վարդագույն հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթերը՝** 43բ:— Տողերը՝ 29:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Գեորգ արքեպիսկոպոս Չորեքչյան և Արսեն արքեպիսկոպոս Ղլտճյան:— **Պատվիրատուն՝** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդ:— **Ժամանակը՝** 1938—41 թթ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** մատյանը ստացված է 1983 թ. ապրիլի 11-ին Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը ներկայացնում է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի № № 1—40 նիստերի ատենագրության մատյանը: Այս ժողովները տեղի են ունեցել 1938 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 1ա—43ա): Մատյանում կա նաև հաջորդ ժողովների արձանագրությունն ևս, № № 1—21 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1939 թ. հունվարից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 44ա—71բ), № № 1—15 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1940 թ. հունվարի 30-ից մինչև դեկտեմբերի 31 (թթ. 72ա—90ա) և վերջապես № № 1—9 նիստերի վերաբերյալ, որոնք գումարվել են 1941 թ. հունվարի 15-ից մինչև հուլիսի 31 (թթ. 90բ—98բ):

Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին մասնակցել են միայն երեք անդամներ՝ Գեորգ արքեպիսկոպոս Չորեքչյան, Արսեն եպիսկոպոս Ղլտճյան և Վրթանես Եպիսկոպոս (միայն 1938 թ. մայիսի 31-ից մինչև 1939 թ. ապրիլի 25):

1938 թ. ապրիլի 6-ին վախճանվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեկյանը:

Թթ. 14ա—բ.—Գերագույն Հոգևոր Խորհուրդը լսել է Արսեն արքեպիսկոպոս Ղլտճյանի «Ապրիլի 19-ի յայտարարությունը հանգուցեալ Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի 1936 թ. Ապրիլի 18-ին № 620 Հայրապետական կոնդակով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ՝ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսին Ամ. Հյց. Հայրապետի տեղակալ կարգելու մասին: Որոշեցին աւանդական եղանակով հաղորդել այս մասին Կիլիկիոյ Կաթողիկոսին, Պատրիարքներին և բոլոր թեմերի Առաջնորդներին»:

Գեորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը 1938 թ. № № 1—11 նիստերի արձանագրության ներքև ստորագրել է որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ միայն, իսկ 1938 թ. ապրիլի 19-ից սկսած (տեսնել թ. 14բ) արդեն հանդես է գալիս որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի Նախագահող և Հայրապետական տեղակալ:

Թթ. 30ա—34ա.—Երեք եպիսկոպոսներից բաղկացած Գերագույն Հոգևոր Խորհուրդը լսել է Մայր Աթոռի միաբան Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր Մովսեսյանի միաբանությունից հրաժարման հարցը և որոշել է նրան «1. հանել Մայր Աթոռի միաբանութեան շարքից և 2. զրկել նրան հոգևոր կոչումից ու դասել աշխարհականաց կարգը»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է հետևյալը)

№ 8
Մատեան
արձանագրութեանց
Ս. Էջմիածնի
Գերագոյն Հոգևոր Խորհրդի
1 Յունվար 1938 թ.

Թ. 43բ.—1939 թ.:
Թ. 71բ.—1940:
Թ. 90ա.—1941:

(Շարունակելի)